ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 15 » հունիս 2026թ. No 3436 - Ա

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ԼԵՀԱՍՏԱՆ ՍՊ.Զ Օ.Օ., ՈՒԼ. ԿՍ. Ջ.ՊՈՆԻԱՏՈՎՍԿԻԵԳՈ 5, ԳՐՈԴԶԻՍԿ ՄԱԶՈՎԵՑԿԻ, 05-825- ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ՌՈՒՄԻՆԻԱ Ս.Ա., 99-105 ԳՈՒՋԱ ՎՈԴԱ Փ., 540306, ՏԱՐԳՈՒ-ՄՈՒՐԵՍ, ՌՈՒՄԻՆԻԱ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ, ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ ԲԲԸ, ԳՅՈՄՐՈՒ Ճ. 19-21, 1103 ԲՈՒԴԱՊԵՇՏ, ՀՈՒՆԳԱՐԻԱ «ՍՏՈՊԴԻԱՐ ՆԻՖՈՒՐՕՔՍԱԶԻԴ ԴԵՂԱԿԱԽՈՒՅԹ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 220ՄԳ/5ՄԼ; 90ՄԼ ԱՊԱԿԵ ՇՇԻԿ ԵՎ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՉԱՓԻՉ ԳԴԱԼ (2,5ՄԼ/5ՄԼ)» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Լեհաստանի Գեդեոն Ռիխտեր Լեհաստան Սպ.զ օ.օ., ուլ. Կս. Ջ.Պոնիատովսկիեգո 5, Գրոդզիսկ Մազովեցկի, 05-

825- բաց թողնման հսկող, Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ., 540306, Տարգու-Մուրես, Ռումինիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա «Ստոպդիար նիֆուրոքսազիդ դեղակախույթ ներքին ընդունման 220մգ/5մլ; 90մլ ապակե շշիկ և երկկողմանի չափիչ գդալ (2,5մլ/5մլ)» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ЛП-N-000341-ГП-АМ առ 05.06.2026թ. բացասական եզրակացության համաձայն հայտը մերժվում է հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 31.10.2025 №25-6-4343284/Изм/ЗД/ЭД):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 57 և 58-րդ կետերը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Լեհաստանի Գեդեոն Ռիխտեր Լեհաստան Սպ.զ օ.օ., ուլ. Կս. Ջ.Պոնիատովսկիեգո 5, Գրոդզիսկ Մազովեցկի, 05-825- բաց թողնման հսկող, Գեդեոն Ռիխտեր Ռումինիա Ս.Ա., 99-105 Գուզա Վոդա փ., 540306, Տարգու-Մուրես, Ռումինիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա «Ստոպդիար նիֆուրոքսազիդ դեղակախույթ ներքին ընդունման 220մգ/5մլ; 90մլ ապակե շշիկ և երկկողմանի չափիչ գդալ (2,5մլ/5մլ)» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ